

Զանգահարեք առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար

Կարևոր է զանգահարել Ձեր Նահանգի Բժշկական օգնության գրասենյակ (Medicaid) կամ լրացնել դիմումը, եթե կարծում եք, որ կարող էիք պայմանունակ լինել խնայողությունների համար, նույնիսկ եթե Ձեր եկամուտը կամ պաշարներն աե լեն այս բրոշյուրում թվարկված գումարներից: Այցելեք Medicare.gov/talk-to-someone, ընտրեք ձեր նահանգը, այնուհետև ընտրեք «Այլ ապահովագրական ծրագրեր» (Other insurance programs), որպեսզի ձեռք բերեք ձեր նահանգի Medicaid-ի գրասենյակի համարը: Դուք նաև կարող եք զանգահարել 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով: Հեռատիպ / TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-877-486-2048 հեռախոսահամարով:

Իրավունք ունենալու մասին տեղեկացվել կարող եք միայն դիմելու միջոցով:

Զանգահարեք Ձեր Նահանգի Բժշկական օգնության գրասենյակ (Medicaid)՝ իմանալու համար արդյոք իրավասու եք:

Որտեղի՞ց կարող եմ ավելի մանրամասն տեղեկություններ ստանալ:

- Այցելեք Medicare.gov կայքէջ Medicare-ի վերաբերյալ հրապարակումներին ծանոթանալու կամ դրանք տպելու, ինչպես նաև օգտակար հեռախոսահամարներ և կայքէջեր գտնելու համար:
- Զանգահարեք 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով և հարցրեք Medicare-ի ապահովագրավճարների վճարման հետ կապված օգնություն ստանալու մասին: TTY օգտագործողները պետք է զանգահարեն 1-877-486-2048 հեռախոսահամարով:
- Զանգահարեք Ձեր Նահանգի Բժշկական (Medicaid) գրասենյակ: Նրանց հեռախոսահամարը ձեռք բերելու համար այցելեք Medicare.gov/talk-to-someone, ընտրեք ձեր նահանգը, ապա ընտրեք «Այլ ապահովագրական ծրագրեր» (Other insurance programs) կամ զանգահարեք 1- 800-MEDICARE:

Դուք իրավունք ունեք ստանալու Medicare տեղեկությունները հասանելի ձևաչափով, ինչպես օրինակ՝ մեծ տառերով, Բռայլի այբուբենով տպած տեքստի կամ աուդիո ձայնագրության տեսքով: Դուք նաև իրավունք ունեք բողոք ներկայացնելու, եթե կարծում եք, որ ձեր նկատմամբ խտրականություն է կիրառվել: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Medicare.gov/about-us/accessibility-nondiscrimination-notice կայքը կամ զանգահարեք 1-800-MEDICARE (1-800-633-4227) հեռախոսահամարով: TTY օգտագործողները կարող են զանգահարել 1-877-486-2048 հեռախոսահամարով:

Այս ապրանքն արտադրվել է ԱՄՆ հարկատուների հաշվին:

Օգնություն ստացեք Medicare-ի հետ կապված Ձեր ծախսերի կապակցությամբ:

ԻՆՉՊԵՍ ՍԿՍԵԼ

Ծրագրեր, որոնք կարող են օգնել Ձեզ գումար խնայելու հարցում

Medicare.gov

CMS Product No. 10126-AR (Armenian)
Revised March 2022

MEDICARE ԵՎ MEDICAID ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԸ

Նահանգային ծրագրերի միջոցով կարող եք գումար խնայել

ԵԿԵՔ ՍԿՍԵՆՔ

Դուք կարող եք ստանալ աջակցություն ձեր նահանգից՝ ձեր Medicare-ի ապահովագրական վճարների (ապահովագին) վճարման համար: Որոշ դեպքերում, եթե Դուք բավարարում եք որոշակի պայմաններ, Medicare-ի խնայողությունների ծրագրերը կարող են վճարել նաև Medicare-ի «A» մասի (Հիվանդանոցային ապահովագրություն) և Medicare-ի «B» մասի (Բժշկական ապահովագրություն) չհատուցվող գումարները, համաապահովագրությունը և համավճարները:

Գոյություն ունի Medicare-ի խնայողությունների ծրագրերի 4 տեսակ՝

1. Medicare-ի իրավասու շահառու (Qualified Medicare Beneficiary **(QMB)**)
2. Ցածր եկամուտ ունեցող նախանշված՝ Medicare-ի շահառու (Specified Low-Income Medicare Beneficiary **(SLMB)**)
3. Իրավասու անհատ (Qualifying Individual **(QI)**)
4. Հաշմանդամություն ունեցող և աշխատող իրավասու անհատներ (Qualified Disabled & Working Individuals **(QDWI)**)

Եթե դուք իրավասու եք օգտվել QMB, SLMB կամ QI ծրագրերից, դուք ավտոմատ կերպով իրավասու եք ստանալ Լրացուցիչ Օգնություն՝ Medicare-ի դեղերի վճարման համար:

3 կարևոր հարց

Եթե տվյալ բոլոր հարցերին պատասխանում եք «այո» , այցելեք Medicare.gov կամ զանգահարե՛ք Ձեր նահանգային Բժշկական օգնության գրասենյակ ժամանակը՝ տեսնելու արդոք պայմանունակ եք Ձեր նահանգում a Medicare Խնայողություններ ծրագրին:

1. Դուք օգտվու՞մ եք կամ իրավունք ունե՞ք օգտվելու «A» մասից: Եթե Դուք համոզված չեք, նայեք Medicare-ի Ձեր կարմիր, սպիտակ և կապույտ քարտի վրա կամ զանգահարեք Սոցիալական ապահովության ծառայություն՝ 1-800-772-1213 հեռախոսահամարով: TTY օգտագործողները պետք է զանգահարեն 1-800-325-0778 հեռախոսահամարով:

2. 2022 թվականին Ձեր եկամուտը կազմե՞լ է ստորև նշված եկամտի սահմանաչափը կամ դրանից ցածր: Դիագրամում ներկայացված տեղեկություններն առկա են Medicare.gov/medicare-savings-programs կայքում:

Ծանոթագրություն. Այս աղյուսակում նշված եկամտի և միջոցների սահմանաչափերը կարող են փոփոխվել 2023 թվականին:

Medicare-ի խնայողություններ-ների ծրագիր	Անհատի համար ամսական եկամտի սահմանաչափը*	Ամուսնացած զույգի համար ամսական եկամտի սահմանաչափը*	Օգնում է վճարել Ձեր
QMB	$1,153	$1,546	«A» մասի և «B» մասի ապահովագրավճարները և այլ ծախսեր (ինչպես օրինակ՝ չհատուցվող գումարները, համաապահովագրությունը և համավճարները)
SLMB	$1,379	$1,851	Միայն «B» մասի ապահովագրավճարները
QI	$1,549	$2,080	Միայն «B» մասի ապահովագրավճարները
QDWI	$4,615	$6,189	Միայն «A» մասի ապահովագրավճարները

3. Դուք ունեք սահմանափակ միջոցնե՞ր: QMB, SLMB, 2022 թվականին QMB, SLMB և QI ծրագրերի համար միջոցների սահմանաչափը մեկ անձի համար կազմում է $8,400, իսկ ամուսնացած զույգի համար՝ $12,600: QDWI ծրագրի համար միջոցների սահմանաչափը մեկ անձի համար կազմում է $4,615, իսկ ամուսնացած զույգի համար՝ $6,189: Հաշվարկելի միջոցները ներառում են ընթացիկ կամ խնայողական հաշվում առկա գումարը, արժեթղթերը և պարտատոմսերը: Երբ հաշվարկում եք Ձեր միջոցները, մի՛ ներառեք Ձեր տունը, մեկ ավտոմեքենան, գերեզմանատեղը, մինչև $1,500 կազմող հուղարկավորության ծախսերի համար խնայված գումարը, կահույքը կամ այլ կենցաղային ու անձնական իրեր:

* Եթե Ձեր եկամուտը ստանում եք աշխատելու միջոցով, Դուք կարող եք իրավունք ունենալ օգտվելու այս արտոնություններից, նույնիսկ եթե Ձեր եկամուտը գերազանցում է այս սահմանաչափերը: Բազմաթիվ նահանգներում եկամտի ու միջոցների հաշվարկման կարգը տարբերվում է, ուստի, Դուք կարող եք իրավունք ունենալ օգտվելու այդ արտոնությունից Ձեր նահանգում, նույնիսկ եթե Ձեր կարծիքով Դուք գերազանցում եք այս սահմանաչափերը: Սահմանաչափերը աննշան չափով ավելի բարձր են Այլասկայում և Հավայան կղզիներում: Որոշ նահանգներում միջոցների սահմանաչափերը ավելի բարձր են, կամ այդ նահանգները հաշվի չեն առնում միջոցները: Առավել մանրամասն տեղեկությունների համար պարզեք Ձեր նահանգում կիրառվող կարգը:

1-800-MEDICARE

Medicare.gov